

ԿՐԾՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԴԱՆԴՈՒՄՆ

ՄԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ.

(ԱՐԱՆՏԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՒԷՐ ՄԵՐ Պ. ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑԻՆ) .

Յանկանդով փոքր ի շատե նպաստել մեր կրօնուսոյցների դասաւանդմանն, ձեռնարկեցի գրել մի շարք յօդուածներ կրօնագիտութեան դասաւանդման մասին որը մեծ մասամբ թարգմանօրէն քաղած եմ շատ փոփոխութիւններով ուս յայտնի մանկավարժ Միքայէլ քահանայ Սօկոլովի յօդուածներից որոնք ապուած են Рус. нач. учитеъ ամսագրում 1880 թ.

Կրօնագիտութիւնը շատ մօտ յարաբերութիւն ունի դէպի մարդն, նա խօսումէ Աստուծոյ մասին, Արի հետ մենք միանում ենք մեր հոգւոյ բոլոր զօրութիւններով, Կրօնը բոլոր ժամանակներում մարդու և հասարակութեան ամենահոռանդուն պահանջն էր կազմում, Զըկար և չկայ էլ ժողովուրդ առանց կրօնի. այդ բնածին պահանջը կապ ունի մարդուս վերայ բնութեան ունեցած ազդեցութեան և մարդուս մէջ ծագած ինքնաճանաչութեան հետ: Մարդս չըջապատող բնութիւնը ուսումնասիրելիս՝ զգումէ բաւականութիւն թէ ստացած տեղեկութիւնից և թէ դէպի գեղեցկութիւնն ունեցած այն անմիջական զգացմունքից, որը աստիճանաբար բացվումէ մարդուս հոգու մէջ:

Բնութիւնից ստացած վայելչութիւնը մատչելի է թէ զարգացած և թէ չըզարգացած մարդուն՝ պայծառ ամառային առաւօտը, մութուր օդը, դաշտերի լայնատարածութիւնը և ծաղկազարդ մարգագետինների զանազանակերպութիւնը, լեռնազագագանների և հեռու գտնուած հորիզոնի տեսքը, միջատների և թռչունների ուրախութիւնը և ուրիշ շատերը՝ պարզապէս ասումեն հասարակ մարդու հոգուն, որ այդ բոլորը վերին աստիճանի սիրող Աստուծոյ— աշխարհի և մարդու Հօր գործերն են: Արանով զգացած բաղդաւորութեան զգացմունքը ամենալաւ և ամենազօրեղ ապացուցութիւնն է այն բանի՝ որ ճիշտ կերպով հասկացվումէ աստուածային բնութեան ամենաբարի յատկութիւնն:

Մարդուս վերայ բնութեան ունեցած այս ազդեցութեան հետ ծագումէ և ամրանում մի այլ յարաբերութիւն դէպի տեսանելի աշխարհն: Տիեզերքը ծառայումէ որպէս Արարչի մեծութեան արտաիայլումն մէկ խոհուն մարդու համար ամենավսեմ ստեղծողական մտքի արտայայտումն:— Մարդս ինքն շատ բան է ստեղծում, բայց նորա լաւ ստեղծուածները զարմանալի կերպով ոչինչ են երևում Աստուծոյ գործերի առաջ, ներկայացնելով կարգ և զարմանալի միութիւն զանազանակերպ երեւոյթների մէջ, ամբողջի հրաշալի ներդաշնակութիւն և կեանքի անսպառելի առատութիւն տիեզերքի մէջ, աստուածային ստեղծուածքները բնութեան վերայ խորհող

և զգացող զննողին այն ամենախորին համոզմանցն են հասցնում թէ՛ յաւիտենական իմաստութիւնը և սէրն է կոտավարում տիեզերքը:

Մեր յարգանքը զէպի մարդկային ստեղծագործութիւնը առաւել աճումէ, երբ զարգանումն մեր ոգելից զաղափարները, և մեր զարմանքը զէպի տիեզերքի Ասեղծողն աւելի մեծանումէ, երբ մենք աստուածային գործերը հասկանումենք: Բնութիւնը տալիս է իմաստուն մարդուն ամենաբարձր բանականութեան լուսաւոր մտքեր, իսկ ազնիւ ուսումնասիրութիւնն ուրախալի բաւականութիւն, և զգայուն սրտին՝ զգացմունք:

Մարդու հոգին ոչ թէ միայն զարգանումէ և զանազան աստիճան երջանկութիւն է վայելում բնութեան ազդեցութեան տակ, այլ և ընդունակութիւն ունի վեր սլանալ իւր մտքերի, զգացմանց և ցանկութեանց շրջանի մէջ, և ճանաչել իւր գերազանցական գրութիւնը ամբողջ աշխարհիս մէջ, Հասարակ մարդը իրան ջոկումէ բոլոր կենդանի իրան շրջապատող առարկաներից և իւր հոգու մէջ տեսնումէ երկնային զօրութիւն, որը քաշումէ նորան զէպի երկինք, Նա այնտեղ որոնումէ այն էակին, որ միայն կարող է հասկանալ իւր մտածմունքները, համակրել իւր ուրախութեանց և մանաւանդ տիրութեանց և սիրտ տալ իրան իւր հոգւոյ բարի վճռականութեան բոլէներին: Լուսաւորումը մարդը կարգումէ իւր հոգու ամենալսեմ՝ մտքերում և ամենամաքուր զգացմանց մէջ՝ վկայութիւն նորա մասին, որ մարդկային հոգու նշանութիւնը երկրի վերայ չէ և թէ նորա ձգտումները առաւել բարձր են տեսանելի աշխարհից, Աստուծուն ճանաչելու այդ երկտեսակ եղանակը կոչվումէ Բնական:

Մարդկութիւնը իւր զարգացման մէջ այդ բնական ճանապարհով է յառաջ գնացել և այնպէս խիստ թափանցած է եղել կրօնական զգացմամբ որ չի եղել և չըկայ էլ ոչ մի ժողովուրդ, որը չը ճանաչէ Աստուծուն:

Բաւական չէ որ մարդիկ ճանաչել են Աստուծուն, նոքա միշտ իրանց մէջ նկատել են անհամաձայնութիւն, որովհետեւ պատահած է՝ որ մարդիկ ցանկացել են պաշտել իրենց սիրելի Աստուծուն, բայց այդ անհամաձայնութեան շփոթութեան զօրութիւնը նոքա հակառակ կողմն է տարել, որով գործողութիւնը անհաճելի ուղղութիւն է ստացած եղել: Ս. յովսիս ուղղութիւնը պարզ կերպով արտայայտումէ մարդոց սեպհական անզօրութիւնը հասկացողութեամբ, որի հետեանքից աստիճանաբար շփոթել են բարին չարութեան հետ և արատաւոր կեանքը միշտ նախադասել են: Բայց միշտ այդպէս չի շարունակուել, որովհետեւ ճանաչել են իրանց վատ ուղղութիւնը և աշխատել են կրկին իրանց աստուածահաճոյ ընթացքը բռնել: Սիայն գործնից դուրս գալու համար նա ի՞նչ է ձեռնարկել, նա գիմել է իւր Արարչին և աշխատել նորա հայրական գութը շարժել իւր աղօթքներով և զոհերով և իրեւ ամենաջերմ կրօնական զգացմանց արդասիր, շարժել է իւր Արարչի դութը և մարդկային զոհերով: Աւսումնասիրելով մարդկութեան պատմութիւնը, մենք նկատումենք, որ չընայելով զոհերին և աղօթքներին, այնու ամենայնիւ հին աշխարհումն չարութիւնը տիրապետել էր և ցաւալին

էլ այն էր որ միջոցներ չը կային մարդկութիւնը այդ բարոյական անկումից ազատելու:

Քաղաքակրթութեան վերին աստիճանի զարգացման ժամանակ և ամենակրթեալ մարդիկ ևս ընկնումէին ծայրահեղ անբարոյականութեան մէջ: Հոգեկան բոլոր ձգտումների կորուստը պատճառ է եղած կեանքի նիւթական բարութեանց ձգտելուն, տէրութեան, հասարակութեան և ընտանեաց զանազան անդամների մէջ պատերազմ՝ ծագելուն: Այդ պատերազմի մէջ մարդկութեան ամենալաւ յատկութիւնները ճնշուել և զոհ են բերուել ամենակոպիտ եսականութեան և անառակութեան: Ի՞նչին հասաւ հեթանոսութիւնը կրօնական բարոյականութեան վերաբերմամբ: Հեթանոսութեան գլխականութիւնը ամենալաւ հայելի է նորա ներքին դրութեան:—

Մի քանի դրոշներ ծանօթացնում են մեզ հասարակութեան բարձր դասակարգերի անառակութեան հետ: միւսները մեզ զարմացնում են իրանց պատմութիւններով և միջին դասի կոպիտ ամբոխի անառակ ուրախութեան մասին: նոցա սիրոյ մասին դէպի արիւնալից տեսարանները, ուր և կանայք յետ չէին ընկնում մարդկերանցից:—

Արհամարհանքն դէպի դժբաղդն այնպէս մեծ էր, որ մինչև անդամ կրթութեամբ անձինք դէպի աղքատն ունեցած գթութեան վերայ ծիծաղումէին և ողորմութիւն տալու մն նոքա նկատումէին մի այնպիսի թուլութիւն, որը արժանի չէ մարդուն: Աւերին դասակարգերի սրտերը գրաւելու համար փիլիսոփաները պաշտպանումէին բռնակալութիւնը և ստրկութիւնը: Մարդկութեան մէջ մեղքերի միաժամանակ բնական զարգացման հետ, Տէրն պահպանեց և իմաստնարար կրթեց դէպի բարին եղած ձգտումն և առանձին հեթանոս անհատների մէջ և ամբողջ իսրայէլեան ժողովրդի մէջ:

Այդ տեսակ աստուածային յայտնութիւնը, որը պահպանվումէ մինչև մեր օրերը Սուրբ Գրքերի մէջ, հաղորդումէ մեզ այն աստիճանաբար գործունէութիւնը, որով Տէրը բացեց մարդկութեան մէջ իւր թաղաւորութեան զաղտնիքները, ազդելով իւր ողորմութեամբ մարդու դէպի բարին եղած բնական հակումների: Աստուծուն ճանաչելու այդ եղանակը կոչվումէ քրիստոնէութիւն:

Կրօնական կրթութեան անհրաժեշտութեան մէջ ոչինչ կարծիք չը կայ, նա միայն հաստատապէս և պարզ կերպով ճանաչեցնումէ լաւը և վատը և մարդուն ցոյց է տալիս բարոյական բարի գործունէութեան որոշեալ նպատակը: Բայց այժմ՝ հարց՝ ի՞նչ եղանակով աւելի լաւ է կրթել երեխայոց մէջ կրօնական-բարոյական ուղղութիւնն-բնական՝ թէ գերբնական ճանապարհով: Այս մասին զանազան կարծիքներ կան՝ երկրորդ եղանակի մէջ ըստ երևոյթի նկատելով դժուարութիւն, երբեմն մանկավարժները բնական եղանակը գերադասում են մարդու մէջ կրօնական տեղեկութիւնների և ձգտումների պարզելու համար: Այդպիսի սխալ կարծիքը յառաջանումէ նորանից, որ առարկայի մասին դատողութեան ժամանակ բռնականաբար ուշադրութիւն չեն դարձնում բնական կրօնի արգասիքների վերայ, թէ նոքա ինչպէս էին

արտայայտում՝ պատմաբանապէս ազգերի բարոյական կազմակերպութեան մէջ, ուշադրութիւն չեն դարձնում բնական կրօնի գասաւանդութեան դրժ-ւարութիւնների և թերութեանց վերայ:

Երբ որ մենք կրօնական կրթութեան ժամանակ բնութիւնը, որպէս Աստուծոյ մասին կենդանի վկայութիւն առաջին կարգումն ենք դնում, կրնա-նակէ՝ որ մենք պէտք է օգտուենք այն անյուսալի միջոցով երկխոսեց իսկ կրօնական դարձնելու, որով հրահանգվումէր հեթանոսութիւնը, Կարգս միշտ թող է երեւցել և իւր դատողութեանց մէջ, մինչև անգամ գործը-րում՝ սխալուած, երբ ինքն իրան է յանձնուած եղել, բացի դորանից երե-խայոց համար գասաւանդութեան բնական եղանակը աւելի դժուար կը լինի և այն պատճառով, որ նորանում ամբողջ յառաջադիմութիւնը կախուած կը լինի վերացականութիւնից, բնութեան երեւոյթների պարզ կերպով ըմ-բռնելուց, յաճախ՝ և բնութեան երեւոյթների նոյն իսկ զանազանակեր-պութիւնից, Բնութիւնը ամենայն տեղ միակերպ չէ, միակերպ չեն և նո-րանից ստացած մարդոյ տպաւորութիւնները, Բայց այդ չի նշանակում՝ որ բնութեան ձայնը Աստուծոյ մասին պէտք է առանց ուշադրութեան թող-նուի՝ որովհետեւ նոյն Սուրբ Գիրքը ասումէ՝ «Երկինք պատմեն զփառս Աս-տուծոյ», Հարկաւոր է միայն հրաժարուիլ բնութեան ձայնը առաջին կար-գումն դնելուց, ինչպէս կրօնական կրթութեան գլխաւոր աղբիւր, որպէս օժանդակիչ միջոց—արտաքին բնութիւնը իւր երեւոյթներով և մարդու հոգին իւր զանազանակերպ մտքերով և զգացմունքներով՝ ամենաթանկագին օժան-դակիչ միջոցները կը լինին կրօնի գերբնական գասաւանդմամբ ճշմարտու-թիւնները հասկացնելու մէջ Երկրորդ՝ մարդկութեան մէջ կրօնի ճշմար-տութիւնները պարզելու համար բնութեան փոխանակ՝ գերբնական ծանա-պարհը յառաջ է բերում Աստուծոյ և մարդոյ մէջ մի երրորդ միջնորդ տարր, այն էլ զանազան անձանց՝ որոնք զանազան կողմերից մեզ պար-զումեն մեր՝ գէպի Աստուածն լինելիք յարարելութիւնները, պահպանե-լով խրատուց մէջ երեխայոց կրթութեան ամենաթանկագին աստիճանա-րար դասընթացքը պահպանելով խրատների մէջ, Սրբազան պատմութեան մէջ առաջին աստիճանի վերայ մենք պատահումենք այնպիսի տարրական բարոյական յարարելութիւնների, որոնք միայն ընտանեկան շրջանին կը պատկանին: Սկսելով այդ ստորին պարզ աստիճանից և հասնելով բարձր աստիճանը, ամենայն տեղ պարզ կերպով զանազանվումէ բարոյական բարին չարութիւնից, Առաջուայ ժամանակների մարդիկ իւրեանց բարոյական հոսկոցողութեամբ շատ մօտ են մանկական հասակին և երկխոսք շատ հեշտ կերպով հասկանումեն պատմական անձանց ներքին կեանքը, նոցա հետ և՛ տխրումեն և՛ ուրախանում, հասկանումեն յանցանքի տեղի ունենալը և հեռանումեն նորանից կամ պատահմամբ, կամ կրթութեան ազդեցութեամբ կամ կեանքի մէջ օրինակից խրատուած, ուստի և դորան բնութեանումեն, Զգացմանց զարմանալի լիակատարութիւնը, կամքի զօրութիւնը, եռանդուն անձնութիւնը, գէպի Աստուածն, Աստուածաշնչի պատմութիւնների մէջ

ամենաթանկագին կողմն են: Երեխայք սիրով են սովորում վաղուց մեռած մարդոց մասին եղած պատմութիւնները, նոցա համար դարերը անյայտանում են՝ երեխայք որպէս թէ իսկապէս իրանց առաջը տեսնում են հեղ, իսկ կրօնասէր Աբէլին երկրաւոր և երկնային Հօրն բոլորովին անձնուէր Խաչակին, Ճշմարտապէս սիրելի և անմեղ Յովսէփին, բոլոր թոյլերի պաշտպանին - Մովսէսին, բարեհոգի Դաւթին, Արեւմտեան պատմական անձանց զէպի բարին ունեցած ձգտումն ուսանելով, դորանով բոլորովին հեռանումէ հակառակ ձգտումներից: Արդարացի են ասում թէ՛ օրինակը ամենալաւ դաստիարակն է: Պատմութեան ազդեցութիւնը այդ օրէնքի վերայ է յենում: Ընդհանուր համըմամբ Աստուածաշնչի պատմութիւնները անհամեմատելի են ուրիշ միջոցների հետ բարոյական կրօնական կրթութեան համար: Երբ երեխան կը ծանօթանայ Փրկչի հետ նա շատ կամ սակաւ կը հասկանայ աստուածային այդ սրբազան անձնաւորութեան էութիւնը, պարունակութիւնը: Առաջուայ ապրող արդար մարդոց կիանքի բոլոր գեղեցիկ գործերը միայն թոյլ արտափայլումն են Յիսուսի Քրիստոսի կատարելութեանց: Ինչպէս նա ինքն ապրումէր, այնպէս և սովորեցնումէր մարդոց ապրել: Մարդոց ազատութեան համար նա մեռաւ, իրան փրկարար զօհ մատուցանելով: Դորանով նա միշտ մարդոց սրտերը վառումէր իրան անձնութեամբ հետեւելու: Աւսանողների առաջ պէտք է աստիճանաբար պարզել Փրկչի կեանքը և ուսումն և յետոյ ցոյց տալ, որ նորա խօսքը ընդունելով՝ մարդկութեան կեանքի և գիտակցականութեան մէջ աստիճանաբար կերպարանափոխութիւններ յառաջացրին թէ անհատ անձի և թէ ամբողջ հասարակութեան մէջ:

Յիսուս Քրիստոսի ուսման մէջ լսվումէ այնպիսի ձայն, որը յայտնի չէր մինչև նորա ժամանակ եղած մարդոցն: Խոր թափանցելով մարդոց սրտերի մէջ և նոցա իւր սիրովն զէպի իրան գրաւելով, նա դառնումէ զէպի մարդկային ազատ կամքն և խոստանումէ իւր հետեւողներին բարոյական հարստութիւններ աղքատութեան մէջ, զօրեղութիւն՝ թուլութեան մէջ, երջանկութիւն՝ աշխատանաց և նեղութեանց մէջ, Հաշիւ սիրող մարդը Փրկչին հետևիլ չէր կարող: Միայն անկեղծ սէրը կարող է տանել այն լուծը, որը գնումէ մարդու փերայ Յիսուս Քրիստոսն: Եւ արդարեւ, նա առաջին անգամ ծանօթացրեց մարդկութեանը մաքուր սիրոյ հետ, որը բարոյական կրօնական կեանքի ամենազլխաւոր և հաստատ կանոնն է կազմում: Մարդիկ սրտով ընդունեցին այդ ուսումը և յառաջ բերեցին նոր կեանքի համար: Եւ ճիշտ է, որ նոր կեանք ծնունց, որովհետեւ երբ Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ, հէնց այն ժամանակներից զէպի նորան եղած սիրոյ անունով հարուստը հոգումէ աղքատի, ծերունու և որբի մասին, գնումէ յանցաւորի մօտ իւրաքանչիւր մարդուն եղբայր է՝ ճանաչում և պատրաստ է նուիրել իւր բոլոր ոյժը ուրիշ մարդոց լաւութեան համար: Նա պղտնումէ ոչ թէ այն պատճառաւ, որ ստանայ քաջալերութիւն, օգուտ, պարգև կամ բաւականութիւն, — ոչ, քրիստոնեան այդ անունէ զէպի իւր Փրկչին

և Տէրն ունեցած սիրոյ անուամբս չբմտածելով պարզեի մասին, բոլորովին իրան չընեցելով կանգ առնել անձնասիրական զգացման վերայ, Սէրը առհասարակ մեծ գործ է. այդ սիրով քրիստոնեան իւր մտքերը դարձուցած է զէպի անվերջ Սէրն Առտուած, և դա այնպիսի զօրութիւն է դառնում, որը ստիպումէ ամենայն ուրախութեամբ կատարել գթասրտութեան ամենամեծ գործեր: Քրիստոնէի կեանքի այս և միւս կողմերը օգտակար է և անհրաժեշտ պարզել երկխայոց առաջ թէ Աւետարանի և թէ քրիստոնէական եկեղեցւոյ պատմութեան ուսուցման ճանապարհով, որպէս զի նոքա կենդանի օրինակներով տպաւորուին եկեղեցւոյ նորահաս սերնդի և Աստուածային այգեւտանի ապագայ գործողի գիտակցութեան մէջ:

Աւերև յիշած փոքր ինչ ընդարձակ խորհրդածութիւնները արտայայտուած են ժողովրդական ուսումնարաններում՝ կրօնագիտութեան դասաւանդման ամենաէական կողմն որոշելու համար: Այդ խնդիրն այնպէս կարելի է ձեւակերպել՝ հարկաւոր է ի՞նչ և պարտաւոր է՝ բարոյական ուժն ուրիշ և որոշ նորն է՝ ունոր յարբեցնելու գէպի հարկաւոր պարտաւորութիւնները բարոյական հոգեւոր համակարգի համար: Այդ նպատակին հասնելու համար ի՞նչ պէտք է արած, հարկաւոր է միայն կերպարանափոխել այն ձեւականութիւնը, որն կրօնագիտութեան, որպէս ուսումնարանական առարկայի վերաբերեալ կայ, և ահա ինչպէս: Մեր մէջ կրօնուսոյցները մէկ հակամանկաբարձական ուղղութիւն են բռնած. առ հասարակ դոքա առարկային վերաբերումն ձեւականապէս և սիրումն, որ աշակերտները շատ և արագ քննութիւն բռնեն: Դասի բառ առ բառ սովորելը — ամենալաւ գործն է դոցա: Բայց դոքա այդ ուղղութեանն զոհումն առարկայի կրթող յատկութիւնները: Աշակերտը քննութիւն է տալիս, ստանում է լաւ կամ վատ թուանշան, ուսումն աւարտում է, մտնում է կեանքի մէջ. բայց հիմայ տեսէք՝ արդեօք ստացած տեղեկութիւնները կապ ունին կեանքի հետ, ոչ, որովհետեւ բարեւոյ և շարի մասին ունեցած հասկացողութիւնը նոքա իւրացնումն մտքով, բայց ոչ թէ սրտով: Նոցա կրօնուսոյցները — ուսուցել են մեքենայաբար և չեն պատրաստել իրանց սանիկներին կեանքի համար բարոյականապէս: Թէ կրօնը սովորեցնումն առանց ցոյց տալու թէ դորա համեմատ ի՞նչպէս պէտքէ ապրել՝ այդ ընդհանրացած երեւթ է: Ես չեմ հերքում թէ չպէտքէ կօնտրօլի տակ ձգել կրօնուսուցչի գործունէութիւնը և աշակերտների տեղեկութիւնները վերաստուգել և գնահատել կարող է լինել և առանց մի որ և իցէ թուանշանի: Միայն գլխաւորն այն է որ երկխայք պէտքէ իմանան եկեղեցական ուսումն և թէ վերաստուգումն երբեք չպէտքէ արդելք լինի գլխաւոր նպատակին հասնելու համար: Դասաւանդման պէտք է տալ բուն կրօնական ուղղութիւն: Աւսումնարանական կուրսի մէջ կան մի քանի այնպիսի առարկաներ, որոնց երեխան իւրացնելով իր սեպհականութիւնն է դարձնում և միշտ դոցանով օգտւում: Աովորելով մի որ և իցէ բան անել, նա օգտւում է միշտ իւր գիտութիւնով, երբ որ նա նորանում կարիք է ըլլում: Արօնագիտութիւնը իւր խնդիրներով համադաստախանում է ուսում:

նորանի խնդիրներին կամքը զարգացնելու վերաբերմամբ: Միայն տեղեկութիւնները և գիտութիւնները գործնականութեան մէջ չեն մտնում: Աւսումնորանի խնդիրն կայանումէ մօրգու կամքը դէպի յայտնի գործունէութիւնն ուղղելու մէջ: Արօնագիտութիւնը գորա համար ամենալաւ միջոցն է ներկայացնում: Բայց այդ միտքը իրագործելու համար պէտքէ ամենագլխաւոր ուշադրութիւն դարձնել սրբազան և եկեղեցական պատմութեան խեղացի ուսումնասիրութեան վերայ: Այսպիսով պատմութիւնը պէտքէ բարոյական կրօնական պատմութիւնների շարք կազմէ Աստուածաշնչի ճիշտ չմանց վերայ: Արդեօք այդ ճանապարհով քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնների, աղօթքների և աստուածաբանութեան ուսուցումն մերժվումէ: Այ, միայն ժամանակաւորապէս ընդհատվումէ և տարվում հաստատվումէ աւելի արգասաբեր հոգի վերայ: ուր աղօթքը կերեւայ որպէս հետեանք խորին կրօնական զգացման և խոհուն մտքի: Երոնք յառաջ են եկած պատմական զրոյցով: Մինչև այդ ժամանակ պէտքէ միայն սովորացնել աղօթել առ Աստուած: Մեր յառաջ բերած մտքերի իրագործման դժուարութիւնները իմ կարծիքով կը կայանան նորանում: որ կրօնագիտութեան բովանդակութիւնը մեծ է բայց ընդ հակառակն դասաժամանակներ շատ քիչ են նշանակած լինում ուսումնարանների ծրագիրներում: միայն այդ դժուարութիւնից ևս կարելի է դուրս գալ հեշտութեամբ, եթէ ընդունենք հետեւեալ ենթադրութիւնը: որը թէ այս և թէ այն դէպքում: փաղ թէ ուշ պէտք է մեր ուսումնարանների գործնական շրջանը մանէ: Եւ ահա թէ ինչ,—Մեղանում կրօնագիտութիւնը աւանդումէ կրօնուսուցչը գլխաւորապէս հոգեւորականը: Նա ժամանակի սղութեան պատճառով դժուար թէ կարողանայ իւր ատարկայի ծրագրի համեմատ անցնել: Բեկ միւս ատարկայի ուսուցիչը, հին կարծիքով կրօնագիտութիւնը իւր գործը չէ համարում: Այն ինչ ուսումնարանի թէ կրօնուսուցչը և թէ ուսուցիչը մէկ բարւոյ գաղափար և մէկ նպատակ ունին: այսինքն երեխայոց կրթութիւնն, որը պէտք է միացնէ այդ գործողների դաստիարակիչ գորութիւնները ի մի: Ժողովրդական ստորին ուսումնարանը խեղապէս զանազանվումէ բարձր ուսումնարաններից նորանով: որ նորա մէջ զանազան նպատակներ չբկան թողնելով որ իրանք ուսանողները իւրեանց գործունէութեան ասպարէզը որոշեն: Ժողովրդական ուսումնարանը ունի մէկ նպատակ միայն այն է բարոյական կրօնական կրթութիւն: Աթէ մենք տանում ենք որ ուսումնարանի գործողները յանուն մէկ նպատակի միմեանց հետ չեն միացած: այդ ցոյց է տալիս որ մեղանում ուսումնարանը մանկութեան շրջանումն է գտանվում և էլ չեն հասկանում բարւոյ և շարի մասին կանոնաւոր ուսուցման նշանակութիւնը: Աթէ մենք ամեն մի խոհուն ուսուցչի հարցնենք արդեօք նա ի նկատի ունի՞ իր դասաւանդման մէջ կրթողական նպատակներ: Նա այդ հարցի կարեւորութեան վերաբերմամբ դրականապէս կրպատասխանէ: Հետեւապէս խօսքը միայն կրթութեան հիմունքի մասին է: Ներկայ ժամանակումն ուսուցիչը ինչո՞վ է օգտվում իր կրթողական ազդեցու-

Թեան համար (Մենք յայտնի բան է, իբրև հաստատ հայեացք ընդունումենք, որ կրթութեան ժամանակ նոյն իսկ ուսուցչի անձնուորութիւնը մեծ նշանակութիւն ունի, իսկ այստեղ մենք միայն ի նկատի ունենք այն նիւթը, որով ուսուցիչը օգուտ է քաղում իւր կրթիչ ազդեցութեան համար)։ Նա այդ նիւթը քաղումէ ուսումնարանում ընդունուած ընթերցանութեան գրքից։ Ընտրելով առակները, պատմութիւնները, բանաստեղծական ոտանաւորները, նա կարդումէ նոցա և վերլուծում և յարմար դէպքում իւր հայեացքն է արծարծում կեանքի զանազան կողմի վերայ։ Բայց ո՞ր ուսուցչին չի պատահել նկատել, որ այդ նիւթի մէջ որը իբրև կրթողական խրատների հիմք է ընդունվում, չըկայ ազդեցութեան մէջ միութիւն և բարոյական հայեացքների խիտ կանոնաւորութիւն։ Հէնց դորա շնորհիւ է, որ նոյն իսկ բարոյական ազդեցութիւնը ստանումէ անհաստատ հակասող բնաւորութիւն, որը վնասակար կերպով է ազդում մարդու կեանքի և գործունէութեան վերայ։ Այժմ ուսուցիչը կարող է ամբողջ ընտրած նիւթը միաւորել, նորանից հեռացնել բարոյական հայեացքների միջի ամէն պատահականութիւնը և պայմանաւորութիւնը, այն ժամանակ նա պէտքէ իւր առաջ որոշէ այն նպատակը, որի անունով նա իւր աշակերտներին տանելու է դէպի բարոյական բարի գործունէութիւն։

Գրիստոնէութիւնից դուրս առհասարակ գործունէութեան երկու նպատակ են ընդունում՝ անձնական օգուտ, կամ ներքին բաւականութիւն։ Բայց անձնական օգուտը ամբողջ հասարակութեան մէջ արմատացնելով յոռաջացնումէ պատերազմ և նոյն իսկ հասարակութեան կործանումն։ Բայց ինչ վերաբերումէ անձնական բաւականութեանն, ի նկատի ունենալով այն օգուտն, որը բերվումէ ուրիշով, այն ժամանակ չի կարելի մոռանալ, որ բարոյական գործունէութեան մէջ յաճախ փոխանակ բաւականութեան, յոռաջ է զալիս վհատումն և տանջանք։ Անյապաղութեան ժամանակ միայն քիչ անձինք բարոյական գործունէութեան այդ սկզբունքին հաստատ են մնում։ Նոյն իսկ գիտակցութիւնը շատ դժուար գործ է և պահանջումէ մտքի խորին զարգացումն։ Այս և այն հիմանքը հեթանոսութեան ժամանակ միակ կեանքի կանոններն էին։ Բայց ինչպէս առաջ, այնպէս և ներկայ ժամանակս յանուն եռական զգացմանց բարոյական կեանքի արդասիքները միշտ եղել են տխրալի ընդհանրութեան բարորութեան համար։ Արովհետև վերև յիշած հայեացքները անբուարար են, այդ պատճառի առաջի տեղն է գուրս զալիս բարոյական կեանքի առաջնորդող ըսկզբունքը, որը աւանդվումէ բրիստոնէութիւնով։ Այդ է՝ սէրն դէպի Աստուած և պատրաստակեանութիւնը նորա կամքը կատարելու յանուն դէպի նորան ունեցած սիրոյ։—Այդ կանոնի կենսական նշանակութիւնը պէտքէ հաւասարաշափ զգան կրօնուսոյցը և ուսուցիչը։ Հէնց այդ կրթողական կէտումն բոլոր ուսուցիչների գործունէութիւններն միանում են։ Եւ որքան նա աւելի միանայ, այնքան աւելի պտղաբեր կըլինի ուսումնարանի ազդեցութիւնը։ Հասարակութիւնը կառուցանումէ ուսումնարան, յանձնե-

լով խրեանց որդիքը ուսուցիչներին ճշմարիտ ցանկութեամբ, որ երեսույթ ուսումնարանից ստանան սէր դէպի Աստուածն և դէպի բարութիւնն: Կրօնուսույցը և ուսուցիչը անպատճառ պէտք է պահպանեն այդ համակրութիւնը, և իրանց խելացի խօսքով և օրինակով զարդացնեն և ամրացնեն խելացի կրօնասիրութիւնը իրանց սանիկների հոգու մէջ, յարուցանեն համակրանք դէպի բարի գործունէութիւնը և մերձաւորներին ծառայելու ամենայաւ տեսակները ցոյց տան: Կրօնը տալիս է կեանք և զօրութիւն դէպի բարութիւնն եղած ձգտմանն:

Կրօնը, որը պատուաստուած է ուսումնարանով, պէտք է ամենալաւ կապակցութեան մէջ մտնի եկեղեցւոյ կեանքի և ձևերի հետ: Եթէ, զորօրինակ, եկեղեցւոյ կանոններում տօնը ընդունվում է որպէս Աստծուն երկրպագելու ժամանակամիջոց աղօթքով և բարի գործունէութեամբ, այն ժամանակ բոլոր ուսուցիչները հաւասարապէս պէտք է իրանք իրանց վերայ ցոյց տան երեսույցը անկեղծ սրտից բլխած աղօթքի և քրիստոնէական բարեգործութեան օրինակ: Աղօթքը եկեղեցումն հասարակական է, այնտեղ պէտք է տօն օրն աղօթէ քահանան, կրօնուսույցն և ուսուցիչն, առաջինը իւր հոգևոր որդւոց հետ, երկրորդն և երրորդն իրանց սանիկներով, որպէս դաստիարակիչներ: Աւերին աստիճանի կարեւոր է, որ խօսքի և կեանքի մէջ միութեան հետեւ ուսումնարանը, Աւանդների վերաբերեալ դժբան կարելի է հասնել միայն դաստիարակների մէջ եղած ուղղութեամբ: Եւս առաւել ուսուցիչը բաւականութիւն կըտայ իւր աշակերտների հայրերի և մայրերի խելացի ցանկութեանն, եթէ նա սորվեցնէ կարգաւ և երգել Աստուծոյ տաճարումն: Իսկ ուսուցչի գործունէութիւնը կրթութեան կրօնական բարոյական նպատակներին հասնելու համար կարտայայտուի նորանում, որ նա բացատրողական դասերում ժամանակ առ ժամանակ կարող է օգտուել, ենթադրեմք, հատուածներով Աստուածաշնչից կամ եկեղեցական պատմութիւնից, համաձայն այն պլանին, որ կազմել է կրօնուսույցի հետ միասին: Զորօրինակ, կրօնուսույցը երկար չի կարող մնալ Սաւուղից Գաւթի հալածուելու պատմութիւնների վերայ, Եսայի մարգարէի, և առաքելների կեանքի մասին: Մինչև անգամ բոլորովին բաց է թողնում այդ պատմութիւնները: Աւուսիչն կարող է նուիրել մի քանի դասեր դժբան ընթերցման և բացատրութեան համար: Թէ ի՞նչ աստիճանի նոյն իսկ ուսուցիչ դաստիարակը կարող է հետաքրքրուել այդ գործով, այդ շուտով կըտեսնէ նորանից, որ երեսույթ զարմանալի ցանկութեամբ կըբաղուին այդ գործով և հեշտութեամբ կենթարկուեն սրբազան պատմութիւնների զօրեղ ազդեցութեանն: Մենք կարծում ենք, որ մեզանում յաճախ ուշադրութիւն չեն դարձնում Աստուածաշնչի պատմութիւնների վերայ սխալ համոզմամբ, նոցա հետ իսկապէս ծանօթ չըլինելու պատճառաւ, ինչպէս նոքա գրուած են Աստուածաշնչի մէջ:

Քահանայ կրօնուսույցը պէտք է այդ գործին ամենայն համակրութեամբ վերաբերուի: Արքան շատ լինին խելացի ազդեցութիւնները կրօնական հոգ-

ւով: այնքան աւելի խոր կերպով կարմատանայ կրօնական բնաւորութիւնը ուսանողների մէջ, Արդէն ժամանակն է հասարակութեանն հասկանալ այն սխալ և միանգամայն անտեղի կարծիքը—[թէ կրօնը միայն հոգեւորականութեան մասնագիտական մասն է և ոչ ոք իրաւունք չունի դորա մասին հոգալու: Այդ սխալ համոզմունք է, կրօնական կրթութիւնը և դորա հետ միացած դաստիարակիչ ազդեցութիւնը ամբողջ հասարակութեան պատկանելութիւնն է կաղմում: Ծնողները, դաստիարակները, ուսուցիչները, բոլորը որպէս եկեղեցւոյ անդամ, պարտական են հասարակութեան մէջ մտցնել կրօնական դաստիարակիչ ազդեցութեան վերաբերեալ և իրանց մասն: Եկեղեցւոյ կեանքն այնպէս է, որ նորա ներքին բարեկարգութիւնը բոլոր անդամների համերաշխական մասնակցութեամբ է ստեղծվում: Քահանան պէտք է ամենամերձաւոր յարաբերութիւն ունենայ հասարակութեան և մասնաւոր անձանց հետ: Այդ բաղադրեալ պարտականութիւնները կատարելու համար նա պէտքէ օգնութիւն գտնի հասարակութեան բոլոր հասունացած անդամների կողմից: Շատերին կարելի է ծանր կրեալ այդ ստորագրեալ դերը: Նա այդ դերով կստանայ իւր առաջնակարգ նշանակութիւնը և դորանով մեր հոգեւորականութեան ազդեցութիւնը կը զօրեղանայ, որը և ցանկալի է: Հոգեւորականութեան հետ պէտքէ ձեռք ձեռքի տան և միւս դասակարգերը, որովհետեւ հաւատը ամբողջ հասարակութեան սեպհակրանութիւնն է, սւստի և ամբողջ հասարակութիւնը պէտքէ հոգայ նորա շահերը պաշտպանելու: Հոգեւոր անձինքը որոշեալ կրօնական հասարակութեան ներկայացուցիչներն են: Նորա պէտքէ նորանից ջոկուին ընտրողական սկզբունքի միջնորդութեամբ: Քահանային միշտ պէտքէ ընդունել որպէս հասարակական կրօնական սկզբանց ներկայացուցիչ, և հէնց այդ միտքով նորա վերայ կարելի է ազդել, որ նա ամբողջ հասարակութեան օգնութեամբ միշտ իւր կոչման բարձրութեան վերայ կանգնի: Այդ պատճառաւ ուսումնարանում քահանան մեծ համակրութեամբ կընդունէ ուսուցչի կրօնական ազդեցութիւնը, ինչպէս իւրաքանչիւր խոհուն հովիւ ուրախութեամբ ընդունումէ մի որ և իցէ ընտանիքի կրօնական ազդեցութիւնը իւր հօտի վերայ: Ինչպէս վերեն յիշեցի կրօնագիտութեան ծաւալն և նշանակութիւնը շատ ընդարձակ է, իսկ դորա հակառակ դասաւանդման ժամերն շատ քիչ են նշանակուած մեր ուսումնարաններում: Կրօնական բարոյական իւրատների հետ պէտքէ ընթանայ հաւատոյ և բարոյական ուսման ուսուցումն: Նիւթի մշակման աստիճանին համեմատ կաւանդուին աղօթքները, հանդանակը, պատգամները և աստուածապաշտական արարողութիւնը: Այս վերջին յիշածները այնպիսի աշխատանքներ են, որ կրօնագիտութեան համար ուսումնարաններում նշանակեալ ժամանակը միայն բաւական կըլինի գոցա մեքենայական իւրացման համար, իսկ խելացի ըմբռնելու համար ժամանակ չի հասնիլ: Այդ գծուարութիւնից դուրս գալու համար, առանց դասերի թուերը աւելացնելու, մենք միայն մի ելք ենք գտնում, որը և յայտնում ենք՝ կրօնուսուցչը և ուսուցիչը պէտքէ միասին

գործեն, սա շատ ցանկալի երեւոյթ է ուսումնարանի մէջ: Յիշեցնումսմ, որ ուսումնարանի գլխաւոր նպատակն է երեխայոցն տալ բարոյական զարգացումն:

(Կ Ը Զ Բ Ի Դ Ի Կ Ե Լ)

Գ. Երզնկեանց:

ՊԱՏՐԱՍՏՈՒՈՂ ՍԵՐՆԳԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ:

Ա.

« Առողջ միտք առողջ մարմնոյ մէջ »: Այս մեծ ճշմարտութիւնը յընթաց շատ դարերի կրկնում են մարդիկ: Ոչ դք չի հակառակիլ, որ սա ունի խորը նշանակութիւն: Բայց և այնպէս մարդիկ այնչափ անհոգ են իրանց առողջութեան համար, որչափ դժուար թէ անհոգ լինին նոքա մի որ և է այլ բանում, ոչ մի բանի հետ նոքա այնքան վայր ի վերոյ ծանօթութիւն չունին, որքան այն պայմանների հետ, որոնցով պայմանաւորում է առողջութեան պահպանութիւնն: Նոքա կը զարմանային, եթէ որ մի կրթեալ մարդ չիմանար ոչ մի օտար լեզու, եթէ որ նա ծանօթ չլինէր պատմութեանը, տեղեկութիւն չունենար աշխարհագրութիւնից: Բայց ոչ դք և ո'չ մի ժամանակ չի զարմանում, եթէ այդ կրթեալ մարդը ոչ մի հասկացողութիւն չի ունենում առողջութեան մասին, եթէ նա չի հասկանում թէ առողջ լինելու համար ինչ պէտքէ անել: Ի հարկէ չը պէտքէ զարմանալ, որ խաւար և տգէտ դասակարգը թունաւորում է ինքեան բոբբոսնած հացով, թթու կաղամբով, հոտած մրգեղէններով արեւցուցիչ թութութով և այլ այսպիսի բաներով:—Այս դասակարգը արդարանում է իւր աղխտութեամբ և աղքատութեամբ: Զը պէտքէ զարմանալ որ դատարկապորտ և անխոյժ երիտասարդութիւնը ոչնչացնում է իւր առողջութիւնը աղտեղի անառակութեանց և շուայտութեանց մէջ խանդարելով ստամոքսը ոտարէներով, շամպանեան գինիով, խեցեկտիններով, ու ժամպառ լինելով պարերում, գիշերային հեղձուցիչ խնջոյքներում և պարահանդէսներում:—Հասարակութեան այս մասը արդարացնում է իրան իւր խանդարեալ բնաւորութեամբ ու անմտութեամբ և հազիւ թէ արժէ խղճալ, որ նորա անգամները ժամանակից առաջ կմանեն գերեզման: Զը պէտքէ զարմանալ, որ դժբաղդ մայրը ճնշում է մանկան կազմուածքը խանձարութեամբ, որ նա սաստիկ օրօրելով վնասում է մանկան, կերակրում է նորան քաղցրաւէններով, թէ նա նիհարացնում է մանկան փաթածելով և անդադար սենեկի մէջ պահելով նորան:—Այդ խեղճ մայրը վատ է դաստիարակուած, մտածելու սովոր չէ և երբ որ նա հեկեկում է իւր հոգատարութեան անկարողութիւնից մահու մատնուած մանկան դիակի վերայ, այն ժամանակ մենք նայում ենք նորան լի կարեկցութեամբ: Բայց չի կարելի չը զարմանալ, չը դժգոհել, երբ ամբողջ խմբեր մարդոց մուտք գործելով հասարակութեան մէջ և ամբողջ սերունդի մարմնաւոր և մտաւոր զարգացման պահպանութիւնը իրանց համար